

ԻՏԱԼԻԱՅԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՕՐԵՐԸ ԵՎ Ս. ՂԱԶԱՐԻ ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նոկտեմբերի 5-ից նոյեմբերի 5-ը Նայաստանում անցկացվեցին հայ-իսրայելական բարեկամության օրեր՝ բարձր հովանավորությամբ Նայաստանի Նանրապետության նախագահ Ռոբերտ Զոչարյանի և Իսրայիլայի Նանրապետության նախագահ Կառլո Կոժելիո Չամչի:

Սկսվող հանդիսությունների նախերգանքը դարձավ հոկտեմբերի 2-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի Ազգային ակադեմիական թատրոնում Զուգեպպե Վերդիի «Տրավիատա» օպերայի կատարումը:

Հայ-իսրայելական բարեկամության օրերի հանդիսավոր բացումը Կելի ունեցավ հոկտեմբերի 5-ին Նայաստանի ազգային պարկերասրահում: Միջոցառումների շարքի կազմակերպիչներին և մասնակիցներին Նայրապետական օրհնության իր խոսքը ուղղեց Ն.Մ.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը բարձր գնահատելով բարեկամության այս օրերի բերելիք նպաստը հայ-իսրայելական դարավոր կապերի և երկու երկրների փոխհարաբերությունների առավել սերտացմանը և ամրապնդմանը՝ ի մասնավորի ասաց. «Նոգու առանձնակի խնդությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից գալիս եմք ողջունելու Հայ-իսրայելական բարեկամության օրերի ծրագիրը, որն իրականացվում է Նայաստանի Նանրապետության և Իսրայիլայի Նանրապետության նախագահների բարձր հովանավորությամբ: Նայրապետական Մեր օրհնությունն եմք բերում այս գեղեցիկ նախաձեռնության և ընդարձակ ծրագրի բարերարներին, կազմակերպիչներին ու բոլոր մասնակիցներին:

Ննագույն մեր երկու ժողովուրդների դարավոր բարեկամության դրսևորմանն ու ամրապնդմանն ուղղված միջոցառումները մեկ ամիս շարունակ տոնականությամբ են համակելու Երևանը և մեր մշակութասեր հասարակությամբ:

Նիրավի, դարերի խորքից են գալիս առնչություններն ու բարեկամությունը քրիստոնյա մեր ժողովուրդների: Առկրական ու տնտեսական կապերին ժամանակի հետ գումարվել են ու լայնորեն զարգացել մանավանդ մշակութային սերտ հարաբերությունները՝ թողնելով թանկ ու նվիրական հիշատակներ: Նայրնի է, որ Նայաստանի համար դժվարին ժամանակներում մեր ժողովրդի զավակները հանգրվանել են նաև Իսրայիլայի հողում, զբաղվել արհեստներով, վաճառականությամբ, նավաշինությամբ ու նավագնացությամբ, ինչի մասին տեղեկություններ են պահպանվել հայկական ձեռագրերի հիշատակարաններում: 12-13-րդ դարերից հայկական համայնքներ են եղել Նոուն, Միլանում, Ֆլորենցիայում, Լիվոռնոյում, Վենետիկում, Պիզայում և այլուր: Իսրայելական մեծ նավահանգիստներն ու քաղաքները տնտեսական աշխույժ կապեր են ունեցել Կիլիկյան Նայաստանի հետ, հայ վաճառականների հետ՝ մինչև Իրան ու Նեղիկաստան: Այս տնտեսական առնչությունները մերձեցրել են մեր ժողովուրդներին և փոխադարձաբար

հարստացրել: Մեր ժողովրդին իր բարձր զարգացած արվեստով, մշակույթով ու գիտությամբ մշտապես հեղափոխել է Իրալիան, ուր այցելել և ուսանել են եկեղեցական ու աշխարհական շատ նշանավոր հայորդիք: Իրալական հողից է սկիզբ առնում հայ տպագրությունը, որը, ինչպես բոլոր ժողովուրդների կյանքում, նշանակալի իրադարձություն է դառնում հայոց պատմության մեջ: Երբ Նայասարանը հեծում էր օրարի անողոք լծի ներքո, Վենետիկում լույս տեսավ հայերեն առաջին տպագիր գիրքը, Նոուն ու Լիվոռնոն դարձան հայ տպագրության օրրաններ: Նայ մշակույթին անսխալ հանդիսանալի վաստակ է մատուցել Վենետիկի Մխիթարյան միաբանությունը՝ 300-ամյա հսկայածավալ գիրական ժառանգությամբ: Մխիթարյան գիրական միաբանների համաստեղությունը միշտ լուսավորելու է հայ մշակույթի երկինքը և երախտագիտությամբ է հիշվելու մեր ժողովրդի հոգում: Նոր ժամանակներում առավել ընդարձակ են հայ-իրալական մշակութային առնչությունները՝ օպերայի, թատերական և կինոարվեստում, ճարտարապետության, հոգևոր ու աշխարհիկ երաժշտության, գեղարվեստի և այլ ասպարեզներում: Եվ Մենք հավատում ենք, որ հայ-իրալական օրերը մեծ խանդավառություն են պարգևելու միջոցառումների մասնակիցներին և նոր լիցք ու զորություն են հաղորդելու մեր ժողովուրդների բարեկամությանը և մեր պետությունների հարաբերություններին:

Աղոթք ենք բարձրացնում երկինք, որ Բարձյալն Աստված խաղաղության մեջ պահպանի աշխարհը համայն և օրհնի ժողովուրդների միջև բարեկամության ճանապարհները: Բարի սկիզբ ու ընթացք ենք մաղթում Նայասարանում հայ-իրալական բարեկամության օրերին և սրեղծագործական հաջողություններ՝ մասնակից արվեստագետներին:

Շնորհ եւ սէր մեր Տիրոջ՝ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենակեանն. ամէն»:

Այնուհետև ողջույնի խոսքով հավաքվածներին դիմեց ՆՆ Արքաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը՝ ասելով. «Ես կարծում եմ, որ սա լավագույն արտահայտությունը և դրսևորումն է հայ-իրալական և անցյալի խորը կապերի ու այսօր առկա միջպետական հարաբերությունների»:

Իրալական կառավարությունը ներկայացնող Իրալիայի առևտրի նախարար Ադոլֆո Ուրսուն ասաց. «Մեր դարավոր և ընդհանուր պատմությունը պետք է մեզ օգնի, որպեսզի կարողանանք կերպել ընդհանուր ապագա: Ես վստահ եմ, որ Նայ-իրալական բարեկամության օրերով կնշվի մի շատ կարևոր փուլ մեր երկու երկրների պատմության մեջ»:

Նայ-իրալական բարեկամության օրերի հանդիսավոր բացմանը զուգընթաց Կոնստանտինոպոլում «Նայ Վենետիկ. Մուրբ Ղազարի գանձերը» ցուցահանդեսի բացումը: Նայ-իրալական կապերի շրջագծում ներկայացնելով Վենետիկի Մխիթարյան միաբանության գործունեությունը՝ միաբանության ընդհանուր աբբահայր Եղիա ծայրագույն վարդապետ Քիլադյանը ասաց. «Բոլորս էլ գիտենք, թե հայերի համար ինչ է նշանակում Իրալիան թե՛ իբրև երկիր և թե՛ իբրև հայկական հիշարարների օրրան: Այսօր իրալահայերի համար ինչ է նշանակում Նայասարանը: Իրավացիները, իրենք էլ լինելով մշակութային ժողովուրդ,

հայրնաբերեցին Նայաստանը մշակույթի ճանապարհով, հայրնաբերեցին Պապի այցելությանը: Այսօր ժամանակն է, որ Իրալիան հայրնաբերի Նայաստան բնաշխարհը, հայ ժրագան, սպեղծագործ ժողովուրդը, հայ մշակը»:

Նույն օրը Խնկո Ապր անվան գրադարանում Կեդի ունեցավ «Նայերն Իրալիայում. Իրալիայի հայ համայնքն իր մասին» խորագրված հանդիպումը Իրալիայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում Միլանի Նայ Տան գանձապահ Արմեն Զորջո Բեգդեմիրյանը Նայաստանին նվիրեց իր հոր՝ Միրան Բեգդեմիրյանի՝ ժամանակին Նայաստանի համար հավաքած 500 կտոր գրականությունը:

Արամ Խաչատրյան համերգասրահում երեկոյան Նայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի (գեղ. ղեկավար՝ Է. Թոփչյան) կապարմամբ Կեդի ունեցավ իրալական սիմֆոնիկ երաժշտությանը նվիրված համերգ, որի ընթացքում հնչեցին հարվածներ Վերդիի «Նաբուկո», «Գող կաջաղակ», Ռոսինիի «Վիլիելմ Տել» և մի շարք այլ օպերաներից:

Բոլոր այս, ինչպես նաև հայ-իրալական փոփոխական հարաբերություններին նվիրված գործարար համաժողովները ու բնարկումները փնտրեցին մեկ ամիս, որի ընթացքում կազմակերպվեց 36 միջոցառում:

«Մոսկվա» կինոթատրոնում երկու շաբաթ ներկայացվեցին համաշխարհային կինոյի հայրնի վարպետներ Պաուլո և Վիկտորիո Տավիանի եղբայրների ֆիլմերը: Ցուցադրությանը ներկա էին հանրաժանոթ բեմադրիչները:

Իրալիայի վերջին 100-ամյակի պատմությունը ներկայացվեց Փլորենտացի Ալինար եղբայրների կապարած լուսանկարների ցուցահանդեսով:

Բարեկամության այս օրերի շրջանակում չէր մոռացվել անգամ իրալական խոհանոցը, որին էր նվիրված իրալական «Կոնգրես» հյուրանոցում կազմակերպված «Իրալական խոհանոցի 50 փարին» լուսանկարչական ցուցահանդեսը, որին ներկա էր այդ հաստատության նախագահ Զուգեպպե Դելլ Օստոն:

Երևանի պետական համալսարանում, Վ. Բրյուսովի անվան պետական լեզվագիտական համալսարանում և Իրալիայի դեսպանությունում կազմակերպվեցին իրալերենին և իրալական գրականությանը նվիրված գիտաժողովներ և զեկուցումներ:

Իրալիայի մշակույթը, պատմությունը և փոփոխությունը ներկայացնող բոլոր այս միջոցառումների կողքին բնականաբար առանձնակի փեղ էր փրված հայ-իրալական կապերին և Իրալիայի հայկական հիշատակներին:

Այս առումով խոսում էր հարկապես Ս. Ղազարի հոգևոր-մշակութային արժեքների ցուցահանդեսը, որն, ինչպես ասացինք, բացվեց Ազգային պալկերասրահում, որպեսզի հայ միջնադարյան մշակույթի արժեքների կողքին ցուցադրվում էին նաև այն գործերը, որոնք սպեղծվել էին Ս. Ղազարում և Իրալիայում: Այսպես առանձին մի բաժնով ներկայացված էին Մխիթարյան հրապարակությունները, որոնք իրենց փորագրանկարներով և շքեղ ձևավորմամբ մի նոր էջ բացեցին 18-19-րդ դարերի հայ գրքարվեստի պատմության մեջ:

Նայ նկարչության պատմության ուրույն մի էջը կարելի է համարել Մխիթարյան միջավայրում իրալացի նկարիչների կողմից հայկական թեմատիկայով սպեղծված գործերը: Այս պալկերների բովանդակությունը Ս. Ղազարի վանականները ներկայացրել են իրալացի նկարիչներին, և վերջիններս էլ այդ թեմատիկայով սպեղծել են համապատասխան

նկարներ, որոնք վերաբերվում են ազգային-հոգևոր կյանքի նշանակալից դրվագներին Նայոց Դարձից մինչև Գրերի Գյուլը և Վարդանանց ճակատամարտը: Այս կրավներն ու փորագրանկարները երկու մշակույթների յուրօրինակ միաձուլումն են, որտեղ հայկական թեմաները ներկայացված են իրավացի նկարիչների ընկալմամբ և ժամանակի կլասիցիստական արվեստի սկզբունքներով:

Մեծ հեղափոխությամբ դիմել է նաև Երևանի քաղաքապետարանում բացված «Նայկական հիշարարները Իրավիայում» ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին Իրավիայի տարբեր քաղաքների հայկական հիշարարները սկսած հռոմեական կայսրության շրջանից մինչև Իրավիայի հայկական եկեղեցիները և կրթամշակութային հաստատությունները:

Ողջ Իրավիայով շրջելով հայկական այս հիշարարների հետքերով, դրանք գեղարվեստական մեծ վարպետությամբ նկարել է կանադահայ նկարիչ Նոյր Բազեն: Նայերի ներկայության հետ կապված վայրերի ցանկն էլ կազմել է Վենետիկի Միսիթարյան միաբանության անդամներից Ն. Նարություն վարդապետ Պզպիկյանը: Անհրաժեշտ է նշել, որ Նայր Նարությունը ընդհանրապես մեծ մասնակցություն է ունեցել հայ-իրավական օրերի պատմա-մշակութային մասի կազմակերպման գործում:

Իրավիայում հայ հոգևոր ավանդների ինքնօրինակ մի արտահայտությունն է Ս. Ղազարի եկեղեցական երգեցողությունը: Ինչպես նշում են Միսիթարյան հայրերը, այսպես վանական մի սերնդից մյուսին է փոխանցվել Պապմական Նայաստանից Միսիթար Սեբաստացու բերած ձայնեղանակները, որոնց գրառման և նուրագրման հարցերով երկար տարիներ զբաղվում է Միսիթարյան հայրերից Վրթանես Ուլոհոջյանը: Վենետիկում գտնվող հայ մշակույթի վավերագրման կենտրոնի ջանքերով վերջերս թողարկվեց մի ձայնասկավառակ, որն ընդգրկում է Մեծի Պահոց շրջանի Ապաշխարության շարականները Նայր Վրթանեսի կապարմամբ:

Նայ-իրավական օրերի շրջանակում հոկտեմբերի 8-ին Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահում տեղի ունեցավ այս ձայնասկավառակի շնորհանդեսը, որի ընթացքում հիշյալ շարականների կապարմամբ հանդես եկավ Նայր Վրթանեսը: Նայ հոգևոր երաժշտությանը նվիրված նման գործերի հրապարակության կարևորության մասին խոսեց Փարիզի հայկական հոգևոր երգի կենտրոնի «ԱԿՆ» երգչախմբի ղեկավար Արամ Քերովբյանը: Վենետիկի հայ մշակույթի վավերագրման կենտրոնի ղեկավար Մինաս Լուրյանն էլ ներկայացրեց կենտրոնի աշխատանքները:

Նայ-իրավական պատմա-մշակութային կապերի գիտապեսական քննությունը դարձավ Նայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայում կազմակերպված վենետիկյան երկօրյա ընթերցումները: Գիտաժողովի ընթացքում առանձին բաժանմունքներում ներկայացվեցին այդ կապերը գրականության, ճարտարապետության, քանդակագործության, նկարչության և երաժշտության բնագավառներում:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՍԵԿԻՅԱՆ ԵՊԻՍԿՈՍՈՍ
ՍԵՐՈՑԻՆԻ ՄԱՐԿՐԻՄՈՍ
ԵՎ ԵՍԵԿԻՅԱՆ ԵՊԻՍԿՈՍՈՍ
ՍԵՐՈՑԻՆԻ ՄԱՐԿՐԻՄՈՍ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀՈՒՄ ՆԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՕՐԵՐԻ ԵՎ «Ս. ՂԱԶԱՐԻ ԳԱՆՁԵՐԸ» ՑՈՒՑԱՆԱՆԴԵՍԻ ԲԱՅՄԱՆ
ՆԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ